ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՍԵՎԱՆԻ ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

ք. Սևան Կարմիր բանակի 68
հեռ. +374 261 2-34-00

N 257

13.04.2021 թ.

<<ԱՐՏԱԿՇԻՆ>> ՍՊԸ-ի ՏՆՕՐԵՆ

ԽԱՉԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

ք. Երևան Ավան-Առինջ, 1-ին միկրոշրջան, 1/8 շենք, բնակարան 10
ՀՎՀՀ 01007798

ԾԱՆՈՒՑՈՒՄ

ԱՆ <<Սևանի հոգեկան առողջության կենտրոն>> ՓԲԸ-ի և <<ԱՐՏԱԿՇԻՆ>> ՍՊԸ-ի միջև 22.02.2021թ-ին կնքված ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/13-3 ծածկագրով պայմանագիրն ամբողջությամբ միակողմանիորեն լուծելու մասին

ԱՆ <<Սևանի հոգեկան առողջության կենտրոն>> ՓԲԸ-ի (այսուհետ՝ Գնորդ) և <<ԱՐՏԱԿՇԻՆ>> ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 22.02.2021թ-ին կնքված ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/13-3 ծածկագրով «Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման» պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագրի) թիվ 1 հավելվածով նախատեսված ժամկետում և Պայմանագրի 1.1 կետով սահմանված կարգով՝ <<ԱՐՏԱԿՇԻՆ>> ՍՊԸ-ն պարտավոր էր պատվերն ստանալուց հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում կատարել ստանձնած պարտավորությունները, սակայն մինչև օրս <<ԱՐՏԱԿՇԻՆ>> ՍՊԸ-ի կողմից մատակարարում չի կատարվել:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ <<Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար>>:

Տեղեկացնում եմ, որ Ընկերությունը պատշաճ ձևով չի իրականացրել պայմանագրային պարտավորությունները, այն է՝ խախտել է պայմանագրով սահմանված ապրանքի մատակարարման ժամկետը: Ընկերությանը էլեկտրոնային փոստի միջոցով 15.03.2021թ-ին և

06.04.2021թ-ին ուղարկվել են պահանջվող քանակների վերաբերյալ պատվերներ, սակայն մինչև օրս մատակարարում չի կատարվել: Ընկերությունը հրաժարվում է ապրանքների մատակարարումից՝ պատճառաբանելով, որ պայմանագրում կան թերություններ, ինչի կապակցությամբ պայմանագիրն պետք է չկնքվեր՝ մասնավորապես պայմանագրի և որակավորման ապահովումների վճարման պահանջագրերի մեջ <<ԱՐՏԱԿՇԻՆ>> ՍՊԸ-ի կողմից լրացված է ներկայացման ամսաթիվը:

Պայմանագրի 2.1.7 կետը սահմանում է. Գնորդն իրավունք ունի <<Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի>>:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ընկերության կողմից փաստացի չի կատարվել պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ ԱՆ <<Սևանի հոգեկան առողջության կենտրոն>> ՓԲԸ-ն միակողմանի հրաժարվում է կնքված ապրանքների մատակարարման գնման պայմանագրից՝ համարելով այն միակողմանի լուծված, և պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառում է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

ՏՆՕՐԵՆ՝ Դ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ